

ԱՒԵՏԱՐԵՐ



«ԹՈՂ ՏԱԽԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.» ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԼԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՆՈՅՏԵՄԲԵՐ 1. 1906

ԹԻՒ 11

ԾՈՎԱՑԻՆ ԿՐԻԱՆԵՐ

Ովկիանոսի բնակիչներուն մէջ կան ահագին կրիաներ որոնք 300 քաջէ աւելի կու գան: Ասոնք կը փնտռուին իբրև ուտելու նիւթեր, վասն զի կրիայի ապուրը ամէնէն համադամ կերակուրներէն մէկն է Վիայն դեռահասութեան ատենն է որ կրիան կը վախնայ ծովուն միւս բնակիչներէն: Անոր թանձր պատեանը անոր մեծ պաշտպանութիւնն է, և մինչև իսկ շանաձուկը չյարձակիր անոր վրայ, էգ կրիան ծովեզերքը կ'երթայ, աւազին մէջ խուռն մը կը փորէ, և յետոյ այսպէս պատրաստուած բոյնին մէջ կ'ածէ իր ձուերը: Ասիկա կը տեսէ երկու օր, և երբ կենդանին իր գործը կը լննցնէ, խուռնին մէջ թերևս 150 ձու կը կենայ: Էգ կրիան հոն դանտը կը ծածկէ աւազով իր մէկ ոտք խորունկ, և յետոյ ծով կը վերադառնայ և ա՛լ ուրիշ հող չտանիր իր սերունդին համար: Արևը կը տաքցնէ աւազը, և շատ օրեր յետոյ իբր մէկ մատնաչափ լայն քով նուրբ սև կրիաներ դուրս կու գան բոյնէն և անմիջապէս ջուր կը փնտռեն: Կատարեալ են ձեռով, բայց անոնց պատեանները կակուղ են, և այս ատեն է որ անոնք ձուկերէն ուտուելու վտանգին մէջ կը դառնուին: Ծովային խտտերուն մէջ կը մնան, մինչև որ աւելի մեծնան և իրենց պատեանները կար-


ծրանան: Այն ատեն կը համարձակին դուրս ելլել, կրիան կրնայ շարաթնեթով և մինչև անգամ ամբողջօրով ապրիլ առանց ուտելու, և ոչ միայն կ'ապրի, այլ իր ծանրութենէն գրեթէ բան չպակօիր: Ընդհանրապէս ծովե-

ԻՐ ՄՈՐԻՀԱԿԻՆ ՉԱՓ ԱՂԷԿ
Շատ տարիներ առաջ երբ ես տղայ էի, կ'ըսէ Անգղիերէն լրագրի թղթակից մը, կը յիշեմ թէ հայրս, որ արհեստով որմնագիր (տիվարճը) էր, գործեց ձան Հող անուն մարդու մը համար: Երբ գործը լննցաւ, ձան Հող ըսաւ թէ ստակը այսինչ օրը պիտի վճարէ: Աշունին վերջերը լննցաւ գործը, և երբ ստակը վճարելու օրը եկաւ, այդ օր առաւօտէն մինչև իրկուն սոսկալի փոթորիկ մը կը փչէր, և սաստիկ անձրև ու ձիւն եկաւ: Մը Հողի տունէն ինը մղոն հեռու կը բնակէինք մենք: Ճամբան շատ գէշ էր այնչ ոգին անգամ: Կը յիշեմ որ հայրս ըսաւ նախաճաշի սեղանին վրայ. «Կարծեմ այսօր պիտի չկրնանք ստակ ընդունիլ»



Մը. Հողէ: Բայց հող չէ եթէ անկա այսօր չգայ, վասն զի այդ ստակին անհրաժեշտ պէտք չունիմ հիմա: Տարբերութիւն չընեմ եթէ չվճարուի մինչև ամիս մը:»
Բայց կէսօրուան ատենները ահա Մը. Հող դրան քով երեցաւ գրեթէ սառած, և վրան գլուխը ջրով և ձիւնով ծածկուած: «Ի՛նչ է այս, ձան Հող», գոչեց հայրս, երբ բացաւ դուռը և տեսաւ թէ ան էր դուռը դարնողը: «Ես բնաւ չէի խորհեր թէ դուք հոս պիտի գայիք այս սոսկալի փոթորիկին:» «Ես չըսի՞ որ պիտի գամ», ըսաւ ձան Հող բիրտ կերպով: «Այո, բայց ես ասիկա չնկատեցի այնպիսի խոստում մը որ պարտաւորէր ձեզ

զերքը կը բռնուին անոնք ձու ածելու ատեն, բայց երբեմն ալ կեռով (գանձա) կը զարնուին մինչ կը քնանան Ովկիանոսի երեսը, ինչպէս կը տեսնեք պատկերին մէջ:



զայն կատարել այսպիսի օր մը:” «Ուէ խոստում զոր կ'ընեմ, պարտաւորիչ է, առանց նայելու հովին և օրին: Ես ըսի թէ ստակը այսօր պիտի վճարեմ, և հոս եկա խօսքս պահելու համար:” «Բայց ասիկա պղտիկ գումար մըն է, և ես հիմա պէտք չունէի աւտոր:” «Ես պէտք է որ խօսքս պահեմ: Եթէ գումարը ըլլար տասը սէնթ միայն, և գուք միլիոնատէր մը ըլլայիք, և ես ըսած ըլլայի թէ այսօր պիտի վճարեմ զանիկա, պէտք էր որ հոս գայի թէ և յիսուն մըն ճամբայ երթալու ստիպուած ըլլայի:”


Կը զարմանա՞ք որ յաճախ կ'ըսուի ճան Հոգի համար թէ անոր խօսքը մուրհակ (սէնթ) է: Ան նոյնչափ ճշմարտախօս է որչափ ուղղամիտ: Կը յիշեմ թէ մեր գրողներէն մէկը օր մը մեր տան քով կանգ առաւ քաղաքէն տուն դառնալու միջոցին և գրեթէ անհաւատալի պատմութիւն մը ըրաւ խնդրի մը վրայ, և հայրս ըսաւ, «Անկարելի է որ աւտանկ բան մը ճշմարիտ ըլլայ:» Մարդը ըսաւ, «Ճան Հոգ պատմեց ինձի:» «Ո՛հ, ուրեմն ճշմարիտ ըլլալու է:» «Այո, եթէ ոչ՝ ճան Հոգ երբեք չէր պատմեր:»

Ինչ աղէկ բան է ասոր նման համբաւ ունենալ: Ասանկ համբաւ մը այնպէս շատ փառքերէ և պատիւներէ աւելի արժէք ունի, մինչ ասոնք ունեցողին չվտասիր ժողովուրդը: Կան բարձր դիրքի տէր մարդիկ որոնք ունին ամէն բան զոր հարստութիւնը կրնայ գընել, բայց խոնարհ ճան Հոգէն շատ աղքատ են, վասն զի իրենց խօսքը արժէք չունի, և իրենք զուրկ են պատուոյ այն բարձր զգացումէն որ փառքն է ամենախոնարհ կեանքին:

ԹԷ՛՛ Է՛՛ ԳԱՏԸ

Դան հին Պաղեստինու ամենէն հիւսիսային քաղաքն էր, ինչպէս Բերսարէէ ամենէն հարաւայինն էր, այնպէս որ ամբողջ երկիրը հասկցնելու համար հասարակ կերպ մըն էր ըսել «Դանէ մինչև Բերսարէէ:» Այս ասացումը կը գտնենք Դատ. Ի. 4, Ա թագ. Գ. 20, Բ թագ. Գ. 10, և Հին կտակարանի քանի մը ուրիշ տեղերուն մէջ, Դան քաղաքին հիմնարկութեան պատմութիւնը կը գտնուի Դատ. ԺԲ. գլխուն մէջ: Դանի ցեղը գեռ իր յատուկ ժառանգութիւնը ընդունած չէր երկրին մէջ, և իր գրաւած տեղը նեղ կու գար իրեն: Ուստի հինք մարդիկ

զրկեց նոր տեղ մը փնտռելու համար: Եւ ասոնք, մինչ իրենց ճանքան կ'երթային դէպ հիւսիս, Լայիս քաղաքը եկան, «և անոր մէջ բնակող ժողովուրդը տեսան որ անհոգութեամբ հանդիստ ու ապահով կը բնակէին:» Հաւանօրէն անոր համար որ թշնամի ահաւոր տէրութիւն մը չկար իրենց մօտ, և վասն զի Սիդոնացոց պաշտպանութեան կը վտահէին: Բայց Սիդոն բաւական հեռու էր, և Դանի ցեղը տեսաւ որ այդ քաղաքը դիւրին որս մը պիտի ըլլար իրենց, ուստի մարդիկը նորէն իրենց ժողովուրդին դարձան և վեց հարիւր զինեալ մարդոց հետ առին Լայիսը և կործանեցին զայն: Յետոյ անոր տեղին վրայ շինեցին նոր քաղաք մը, զոր կոչեցին Դան իրենց ցեղին նախահօր անունով:



նով: Անոնք իրենք զիրենք Եհովան պաշտող կը կոչէին, բայց իրենց հետ տարին քանդակուած կուռքը և թափաճու կուռքը զորոնք Միքայի տունէն գողցած էին: Ասիկա կտորել էր Երկրորդ Պատուիրանքը, որ վճռապէս կ'ըսէ, «Դունք քեզի կուռք չլինես, ոչ ալ վերը երկնից մէջ, կամ վարը երկրի վրայ, կամ երկրին տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէջ նմանութիւնը:» Անոնք իրենց հետ առին նաև քահանայ մը, որ թէ և Ղևիի ցեղէն էր, բայց Ահարոնի սերունդէն չէր, ուստի չէր կրնար ըստ օրինի քահանայական պաշտօնի մտնել: Հաւանօրէն Դանի այս որդիները Եհովայի պաշտամունքին հետ կու պաշտութիւն խառնեցին: Թերևս ասոր համար էր որ Յերոբոամ Դան

քաղաքն ընտրեց իբրև յարմար տեղ ուր կանգնէր իր շինած ոսկի հորթերէն մէկը, որպէս զի տասը ցեղերը պաշտէին զայն (Գ. թագ. ԺԲ. 28 — 30), և որպէս զի անոնք չուզէին Երուսաղէմ երթալ տաճարին մէջ երկրպագութիւն մատուցանելու համար: Եւ ոսկի հորթին այս պաշտամունքը հաւանօրէն շարունակեց մինչև այն ատեն երբ Բենադադ առաւ այն քաղաքը (Բ. մնաց. ԺԶ. 4): Անկէ ետև այլ ևս չյիշուիր անիկա:

Գրեթէ ստուգուած է թէ Դան քաղաքին տեղը հիմակուան «Թէ՛ Է՛ Դատ»-ն է, որ կը տեսնուի այս պատկերին մէջ: Անունը կը նշանակէ «Դատաւորին Բլուրը», և Դան անունն ալ «Դատաւոր» կը նշանակէ: Տեղը կը համապատասխանէ Դատ. ԺԲ. 10-ին,

«այնպիսի տեղ մը, ուր երկրի վրայ եղող բաներէն մէկը պակաս չէ:» Բլուրը իբր 80 ոտք բարձրութիւն ունի և ծածկուած է խոտով ու մացառներով: Հոն կան հին հիմերու հետքեր և քարի դէզեր: Բլրին ստորոտը շատ առատաղբիւր մը կը բղկէ որ Յորդանան գետին գլխաւոր ակն է: Յաջորդ երեսի մէկ յօդուածին մէջ կը խօսինք թէ՛ Է՛ Դատը մէջէն գտնուած քանի մը բաներու վրայ:

ՃՏԱՐԻՏ ՔԱՋՈՒԹԻՆ

Ռուրէն սաստիկ բարկութեան ատեն բան մը ըրած էր որու համար ամէնքաւ և ցաւեցաւ բարկութեանը անցնելէն ետքը: «Իբրանի՛ թէ իմ հանդարտութիւն չկորսնցնէի և այնպէս կ'իրք չե՛լէի:» ըսաւ, «Բայց եղաւ:

և ինչ որ եղած է, կարելի չէ ետ դարձնել:» «Բայց չկա՞յ ծուռ գործի մը հետեանքը բաւական պակաս-ցնելու կերպ մը,» հարցուց ձայն մը անոր սրտին մէջ: «Ի՞նչպէս,» ըսաւ Ռուբէն: «Գործուած յանցանքը խոստովանելով,» պատասխանեց ձայնը: «Յանցանքի խոստովանութիւնը մեծ դեր կը կատարէ ծուռը շիտկելու մէջ: Փորձէ՛:» Բայց Ռուբէն մեզի ամէնուս պէս դժկամակ էր իր յանցանքը խոստովանելու: «Սխալեցայ, յանցանք ըրի, ներէ ինձի,» ըսել դժուար է: Բայց ո՞րչափ աւելի կը մտածէր խնդրին վրայ, այնչափ աւելի կը զգար թէ պարտական էր ըսել ճիշդ ատիկա: «Ընելու շիտակ բանը ատիկա է,» ըսաւ ինքիւրեն: «Եթէ գիտնամ շիտակը և չընեմ՝ վանիկա, բարոյապէս երկչոտ մը կ'ըլամ: Ես պիտի ընեմ:»

Այսպէս գնաց այն տղուն, որու դէմ յանցանք ըրած էր, և համար-ձակաբար խոստովանեցաւ իր սխալը, և արդիւնքն այն եղաւ որ այս երկու տղաքը առաջուրնէ աւելի բարեկամ եղան: Եւ միւս տղան աւելի յարգանք զգաց Ռուբէնի հանդէպ, որ քաջութիւնն ունեցած էր իրեն անհաճոյ բան մը ընելու երբ այն ներկայացաւ իբրև իր պարտականութիւնը:


Տղաք, յիշեցէք թէ ճիշդ այնքան քաջութիւն կայ ուղղութիւն ընելուն մէջ ուղղութեան սիրոյն համար, որքան կայ վեհ դիւցազնական գործեր ընելուն մէջ զոր աշխարհ պիտի լսէ:

ԲԱՀԱՂ ԵՒ ԱՍՏԱՐՈՎԹ


Մենք չենք գիտեր թէ ի՞նչ էին այն կուռքերը գործող Գանի որդիները գողցան Միքայի տունէն: Հաւանական է թէ երբ կառավարութիւնը ձեռնարկէ պեղումներ կատարել այն բլրին վրայ և անոր հիւսիսային կողմի երկրին մէջ, անցեալին հետաքրքրաշարժ մնացորդները պիտի գտնուին: Այդ տեղին մօտերը բնակած չէյիս մը, երբ քանի մը տարի առաջ գետինը կը փորէր, արդյո՞ք եօթը փորքիկ արձաններու հանդիպեցաւ, և հոս գրուած պատկերներուն մէջ կ'երևին այն արձաններէն երեքին՝ ճակատին և կուշտին կողմերէն տեսնուածները: Աւելի մեծը և աւելի պզտիկը կը ներկայացնեն Բահաղը, իր ձեռքերը երկընցուցած իբր թէ օրհնելու պէս: Միջակը կը ներկայացնէ Աստարովթը, իր բազուկը ծալած, և գլխուն վրայ թա-

գով: Ամէնէն մեծը կէս կանգուն էր. կայնութիւն չունի:

Բահաղ Տիրուսի ու Սիդոնի և բոլոր փիւնիկեցոց գլխաւոր շատուածն էր և Աստարովթ գլխաւոր շատուածուհին: Բահաղի մարդարէներուն հետ էր որ եղիա ունեցաւ եր-



կինքէն կրակ իջեցնելու համբաւաւոր վէճը: Որովհետև Իսրայելացիք փիւնիկեցոց մէջ կը բնակէին, շարունակ կը փորձուէին Բահաղը պաշտել, մանաւանդ երբ անոնց մեծերը փիւնիկեցի կիներ կ'առնէին, ինչպէս ըրաւ Աքաբա: Եւ այս կուռքին պաշտա-



մանքին մէջ ոչ միայն կենդանիներ կը զոհուէին, այլ երբեմն մանուկներ ալ: Հաւանական կ'երևի թէ փիւնիկեցոց մէջ Բահաղ կը ներկայացնէր արևը, և Աստարովթ, անոր կինը, կը ներկայացնէր լուսինը: Յոյները կը մտածէին թէ Բահաղ իրենց գլխաւոր շատուածը Արամուզդն է զոր փիւնիկեցիք այդ անունով կը կոչեն: Եւ ինչպէս որ «Էլ», Եհովայի անունը,

կը գտնուի Երրայական շատ անուններու մէջ, զոր օրինակ Սամուէլ, Գանիէլ, Իսրայէլ, Ելթանայէլ, նմանապէս Բահաղ անունն ալ կը գրանուի փիւնիկեցի շատ անուններու մէջ: Կարծաղինցի մեծ զօրավարին, Անիբազի, անուան վերջին վանկը օրինակ մըն է, և Պաալպէք ուրիշ օրինակ մը:

Չարմանալի կ'երևի որ մարդիկ կարենան երբեք պաշտած ըլլալ ասոնց նման արձաններ. բայց այսօր տակաւին կան ամբողջ ցեղեր որ կը պաշտեն կուռքեր, որոնք անոնցմէ քիչ սոսկալի չեն: Փա՛ռք Աստուծոյ, հիմա կան անձեր, որոնք կը ջանան ասանկներու տանիլ Աւետարանին լոյսը:

ՔԱՐՈՒ ԵՐԿՈՒՈՐԵԱԿՆԵՐԸ

Քարոյ երկուորեակները զոյգ մը գեղեցիկ փոքր տղաք էին, իրարու այնքան շատ նման՝ որ կ'ըսուի թէ անոնց մայրը անգամ չէր կրնար զանոնք իրարմէ որոշել: Բայց կար պզգոտիկ տարբերութիւն մը — երեսի փոսիկի տարբերութիւնը: Ասոր համար անոնք շատ հեղ «Մէկ-փոսիկով-Երկուորեակը» և «Միւս-Երկուորեակը» կը կոչուէին. և մարդիկ զանոնք յատկապէս կը խնդացնէին հասկնալու համար թէ ո՞րը ո՞րն է: Օր մը երբ անոնք քաղաքին մէջ տեղ մը զրկուեցան գործով, կողմնական ճամբուն վրայ տեսան որ կեռասնի մը կախուած էր, և Մէկ-փոսիկով-Երկուորեակը վեր ցատկեց և պայծառ կարմիր կեռասներով լեցուն ոստ մը փրցուց: Այն ատեն պզտիկ ձայն մը լսեց ցանկապատին միւս կողմէն և ինք ցատկեց անկիւնէն անդին անցաւ: Միւս-Երկուորեակը բաւական արագ չկրցաւ շարժիլ որ կարող ըլլար փախչիլ ցանկապատին մէջէն երկնցող բազուկէն, որ հասաւ իրեն և բռնեց զինք: Այնուհետև բարձր հասակով նիհար կին մը երեցաւ և ըսաւ խոստովեալք, «Գու՛ն ես եղեր իմ կեռասներս գողցողը, հա՛:» «Ո՛յ, տիկին,» պատասխանեց Միւս-Երկուորեակը դողալով: Կինը ուշադրութեամբ անոր վրայ նայեցաւ: Տղուն ձեռքը կեռաս չկար, ոչ ալ կեռասի բիծեր անոր չրթունքներուն վրայ: «Չարմանալի բան: Յանկապատին վերէն տեսնուած երեսը ճիշդ քու երեսդ էր,» ըսաւ կինը: «Իրաւ գուն կեռաս չփրցուցի՞ր:» «Ո՛յ, տիկին,» պատասխանեց Միւս-Երկուորեակը այնպէս համեստ երևոյթով որ կինը հաւատաց

անոր: «Ուրիշ տղայ կամ», հարցուց: «Այո, տիկին», ըսաւ ասրասփած երկուորեակը, ինչ որ ճշմարտութիւնն էր: «Ես կ'ուզեմ բուն գողը գտնել», ըսաւ կինը, և թող տուաւ Միւս-Երկուորեակը որ երթայ: Երբ Մէկ-փոսիկով-Երկուորեակը իր եղբոր պատմութիւնը լսեց, ըսաւ անոր, «Մինակ դուն գնա այն տեղը, ու ես ետ երթամ ու բանը հասկննեմ այն կնոջ»: Այսպէս Մէկ-փոսիկով-Երկուորեակը գնաց ըսաւ կնոջը, «Կը ցաւիմ որ փրցուցի կեռասով լեցուն ճիւղը: Ձխորհեցայ թէ անիկա մէկուն կը վերաբերի: Ես անոնց համար ձեզի պիտի վճարեմ՝ ստակ վաստկել կրցածիս պէս»: «Բայց դուն հիմա ըսիր թէ կեռասները առնողը դուն չես», գոչեց կինը: «Ոչ, տիկին, այո, տիկին, ըսել կ'ուզեմ թէ», կակազեց Մէկ-փոսիկով-Երկուորեակը, «ան իմ եղբարս էր»: «Ոհ, քու եղբայրդ էր կեռասին ճիւղը առնողը, այնպէս չէ»: «Ոչ, տիկին», և Մէկ-փոսիկով-Երկուորեակը սաստիկ կը ջանար որ չցուցնէ զայն: «Բսել կ'ուզեմ թէ կեռասները ես փրցուցի: Հիմա եղբայրս մինակ գնաց ուր մէկտեղ պիտի երթայինք, և ես ետ եկայ ձեզի ըսելու թէ որչափ կը ցաւիմ անոր համար»: «Բայց ինչո՞ւ այսպէս չե՞իր այն ատեն», հարցուց կինը: «Ինչու որ ես հոս չեի: Առաջուան տեսածնիդ ես չեի»: Եւ անոր երեսի փոսիկը հիմա աղուոր մը կ'երեւէր: «Կը տեսնէք որ մենք ճիշդ կը նմանինք իրարու»: «Հասկցայ հիմա, դուք թարու երկուորեակներն էք», ըսաւ կինը: «Այո, տիկին»: «Շատ աղէկ, շատ աղէկ դուն փոքրիկ ազնուական մըն ես, որ եկար և խոստովանեցար ըրածդ: Արդեօք կ'ուզեմ ինձի համար քիչ մը կեռաս ժողվել ծառէն: Եթէ կ'ուզես ժողվել, կրցածիդ չափ կրնաս ուտել»: Այսպէս երբ Միւս-Երկուորեակը ետ եկաւ, իր եղբայրը ծառին վրայ դատաւ, և այս առաջին անգամն եղաւ որ անոնք իրենց ուղածին չափ կեռաս կերան:

«ՄԱՅՐԱ ՀՈԳ ՊԻՏԻ ԸՆԵ՛»

Տղու մը արիւթեան լաւ փորձ մըն է անոր իր մօր հետ վարուելու եղանակը: Ընդհանրապէս, երկրաւոր բարեկամներու այս լաւագոյնը, այսինքն մայրը, ուրախութեամբ յանձն կ'առնէ ամէն զոհողութիւն և սիրով կը կրէ ամէն նեղութիւն իր տղուն համար: Տղուն կողմէն այս մասին պըզ-

տիկ ուշադրութիւն մը անգամ մօրը սիրտը բերկրութեամբ կը լեցնէ: Վարը յիշուած պատանին պէտք է որ շատ նմանողներ ունենայ:

Բարեկամ մը վերջերս քանի մը տղոց խօսակցութիւնը լսեց: Իրիկունը վայելքով մը անցընելու կերպ մը առաջարկուած էր և տղոցմէն մէկը կը մերժէր միւսներուն հետ միանալ: Ինք խոստացած էր իրիկունն ճաշին ատենը տունը գտնուիլ: Միւս տղաքը ծիծաղեցան անոր իրենց առաջարկութիւնը չընդունելու համար բերած պատճառանքին վրայ: Ինք բաւական մեծ էր, այնպէս որ մայրը կրնար հոգ չընել իրեն համար եթէ ժամանակէն ուշ տունէն դուրս գտնուէր: «Ոչ», պատասխանեց իր ընկերներուն, «ես խոստացած եմ տունը գտնուիլ, մայրս հոգ պիտի ընէ»:

Միւս տղաքը սկսան շատ խօսքերով ծաղրել և հեղնել տղուն մայրը, ջղային և մեղամաղձոտ անուանելով զանիկա: Բայց տղան անդրդուելի մնաց: Ինք չէր ուզեր իր մօր մտատանջութեան պատճառ ըլլալ: Յայտնի էր թէ կը փափաքէր առաջարկուած զբօսանքը վայելել, և ուստի անկէ հրաժարելով բաւական զոհողութիւն կ'ընէր իր մօր համար: Այս յօդուածը գրողը կը ճանչնար այդ տղան և բաւական ծանօթ էր անոր տնական կեանքին: Մայրը անձնանուէր էր իր որդիներուն, որոնց ամէնէն պղտիկն էր իր մօր մտատանջութեան պատճառ ըլլալ չուզողը: Անիկա շատ հոգ կը տանէր անոնց ամէնուն ալ դաստիարակութեանը համար: Տղաքը մերձակայ մէկ գոյճի մէջ կը կարդային, և այդ ազնիւ զաւակները կը ճանչնային իրենց մօր ջանքերուն և զօհողութիւններուն արժէքը: Անոնց ամէնէն մեծ հաճոյքն էր իրենց ունէ յաջողութիւնը «պատմել մայրին», և ուսման սաստիկ պարագայէ ետքը անոնց ամէնէն հաճելի զուարճութիւնն էր մայրին հետ պտոյտի ելլելը: Երբ որ մայրը պէտք ունենար վաճառատունները կամ շուկայ երթալ, տղոցմէն մէկը, սովորաբար ամէնէն փոքրը, մօրը կ'ընկերանար անոր ծրարը ձեռքը, և անոր կը ծառայէր կառքերուն մէջըրը և հաճոյք կը զգար գիտելով անոր երջանիկ երեսը: Գոյճի ճիւղակներուն մէջ այս երեք որդիները «իրենց մօր ասպետները» կ'անուանէին: Այս էր պանծալի տիտղոս մը, և գէշ չէ տղոց մէջ այս անունով կարգ մը հաստատելու

խորհուրդ մը: Այն պատանին որ կը վախնար իր մօր մտատանջութեան պատճառ ըլլալէ, իր կարգին մէջ ամէնէն յառաջագէտ ուսանողն էր, զբօսանք սիրող և աշխոյժ տղայ մը ընդհանրապէս, և իր յաջողութիւնները վայելած է իբր վարձ այն բոլոր խնամքներուն, զորոնք սիրով կը մատուցանէ իր մօր: Այնքան արի է որ շատ կը զգուշանայ որ պատճառ չըլլայ իր մօր վշտանալուն մինչև անգամ վայրկեան մը: Երանի՜ այսպիսի տղու մը մօրը:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՀԱՆԵՆՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Պ	Ս	Հ	Ո	Ն
Ե	Ս	Ա	Յ	Ի
Ո	Մ	Ն		
Ը				
Ա	Բ	Մ	Ա	Տ
Ե	Լ	Մ	Ի	Թ
Յ	Ո	Ն	Ա	Ս
Պ	Ա	Ի	Ա	Ս
Ս	Ո	Բ	Ն	Ս
Պ	Ե	Ե	Ղ	Ի
Ո	Բ	Թ		

Լուծեցին: Կ, Պ, Ն. — Յօդակի Հայկազն: Ուրբոս. — Երուանդ Յ. Յուրուճեան: Սուսան. — Նեփթաղի Յ. Թորոսեան: Խոբեբ. — Եղև Մարգարեան, Խաչատուր Յ. Անտոնեան:

ՀԱՆԵՆՈՒԿԻ ՍՈՒՐԻ ԳԻՐԲԵՆ

4	6
2	7
3	4 5 8

Ա. Հովն մը, և Նահապետ մը, Բ. Անորշ անական մը, և Յիսուսի մէկ անունը: Գ. Յիսուս դրուեցաւ... Դ. Յիսուսի մէկ ուրիշ անունը: Ե. 2-7, Գաղաթ մը: Զ. Արհեստաւոր մը, և Յիսուսի մէկ աշակերտը: Է. Զօր մը, և Սամաէլի նախնեաց մին: Ը. Եղբասայ ժամանակ իշխան մը, և Յարեթի մէկ որդին: Թ. 3-4, Բարբաղջ աղիկ մը, և 5-8, Վրանաբնակ մը: 1-8, Յիսուսի մէկ ուրիշ անունը: 3-6, Յիսուսի կեղծանալը: 2-4, Հին քաղաք մը: 4-8, Յիսուսի մէկ եղբայրը: Կ. պոլիս ՅՈՎԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Տարեկան բաժանորդագին՝ 6 դր. արծաթ կանիֆիկ, ամէն տեղւոյ համար:

Ամերիկայի Մերիլանդի Ընկերութեան կողմէն Արտօնատէր Տ. Ք. Կլիֆ Ծնօրէն—Պարագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՍ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՅԱՐԱՆԻ Ա. ՅԱՅՈՒ ՊՅԱԶԱՆ
Ֆինանսները Իօգուշու: Ամերիկան Խան